ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 31. Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառումը

3. Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանից տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Լիազոր մարմինը Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանի տեղեկատվությունը տրամադրում է հարկային մարմնին:

Հոդված 61. Ընդերքօգտագործման վճարների տեսակները

2. Ընդերքն օգտագործելիս կատարվում են հետևյալ վճարները՝

1) բնապահպանական հարկ՝ բնապահպանական միջոցառումների իրականացման համար.

2) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն)՝ ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնման համար.

3) մշտադիտարկումների իրականացման՝ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար.

4) պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարներ, այդ թվում՝ արդյունահանված մետաղական օգտակար հանածոների կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման համար ռոյալթիբնօգտագործման (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների)՝ պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար.

5) ռոյալթի (մետաղական օգտակար հանածոների)՝ պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար.

6) ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման տարեկան պետական տուրք:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված վճարը վճարվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ու չափերով:

Հոդված 64. Ընդերքօգտագործման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները

1. Ընդերքօգտագործողը պետք է ապահովի հետևյալ միջոցառումների իրականացումը՝

7) բնապահպանական վճարներիհարկի հաշվարկման կարգի պահպանումը.

Հոդված 73. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողության հիմնական ուղղությունները

1. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

7) բնօգտագործման վճարի (բացառությամբ ռոյալթիի) բազայի փաստացի ծավալների, դրանց չափաքանակների և վճարների հաշվարկման կարգի պահպանման ~~ընդերքօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների, վճարների հաշվարկման~~ և հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման կարգի ապահովման.

Հոդված 77. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողության ձևերը

1. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողությունն իրականացվում է տեսչական ստուգումների, ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան:

Բնօգտագործման վճարի բազայի չափաքանակների (սահմանափակումների) ստուգումների իրականացման համար հիմք է հանդիսանում հարկային մարմնի ստուգումների տարեկան ծրագրում վճարողի ընդգրկված լինելը, անկախ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված լինելու հանգամանքից:

2. ~~Ընդերքի պետական տեսուչը սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված տեղեկանքների պատճենը պարտավոր է ուղարկել հարկային մարմին:~~

2. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը բնօգտագործման վճարի (բացառությամբ ռոյալթիի) բազայի չափաքանակների (սահմանափակումների) ստուգումների ակտերը, ինչպես նաև ստուգմանը վերաբերող նյութերը (այդ թվում՝ ստուգման արդյունքում արձանագրված ելակետային տվյալները համապատասխան կոորդինատային նիշերով և ստուգումների ընթացքում ստացված գծապատկերները (գծագրված լինելու դեպքում)) ընդերքօգտագործողին հանձնելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հարկային մարմնին: Ստուգման ակտերի ձևերը հաստատում է լիազոր մարմինը: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմնին է տրամադրում վերջին (նախորդ) ստուգման արդյունքում արձանագրված ելակետային տվյալները (համապատասխան կոորդինատային նիշերով): Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով իրականացված չափագրումների արդյունքներով արձանագրված ելակետային տվյալները (համապատասխան կոորդինատային նիշերով) հարկային մարմինը Հայաստանի

Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրամադրում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին՝ ստուգումների իրա-կանացման ժամանակ կիրառելու նպատակով:

Հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ հսկողության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմինն ու բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը փոխանակում են տեղեկություններ:

3. Լիազոր մարմինը պարտավոր է հարկային մարմնին տեղեկություններ տրամադրել կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (պաշտոնատար անձինք) կարող են մասնակցել հարկային մարմնի կողմից անցկացվող համատեղ համալիր հարկային ստուգումներին,

2) բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի հրամանով կամ հանձնարարագրով տեսչական մարմնի պաշտոնատար անձը կարող է մասնակցել հարկային մարմնի կողմից իրականացվող չափագրումներին:

Հոդված 78. Պատասխանատվությունը սույն օրենսգրքի պահանջները խախտելու համար

2. Արգելվում է առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքօգտագործման իրականացումը: Առանց սույն օրենսգրքով սահմանված թույլտվությունների օգտակար հանածոների արդյունահանում կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելն առաջացնում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով~~«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ապօրինի գործունեության համար~~ սահմանված պատասխանատվություն: